Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **20.12.2024թ. ժամը 12.00**

ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիսին մասնակցում էին մարզի խորհրդի 8 անդամներից 7-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արա Երվանդյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազ Գագիկ Այվազյանը, ՀՀ ՊՆ երկրորդ բանակային կորպուսի հրամանատար Գարեգին Պողոսյանը, ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ Սարգիս Մարգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Գեղարքունիքի մարզային վարչության պետ Սանթուր Դուրգարյանը, ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գևորգ Գալստյանը, ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Արմեն Մնացականյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի և Ճամբարակի բաժինների պետերը, ՀՀ ՊՆ ՌՈ Մարտունու և Ճամբարակի բաժինների պետերը, «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մնուկյանը, մարզպետի խորհրդականներ Սևակ Խլղաթյանը և Ալբերտ Աղեկյանը, մարզպետի օգնականներ Մանանա Գալստյանը և Երեմ Քարամյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների տնօրենները, մարզի համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարները:

Օրակարգում՝

1. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2024 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման մասին:**

   /*Զեկ. Յուրա Մուշեղյան* - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2024 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների մասին:**

   /*Զեկ. Անդրանիկ Ջրաղացպանյան* - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի պարտականությունները կատարող/

3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների մասին:

/*Զեկ. Կարեն Զազյան* - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2024 թվականի ընթացքում սուբվենցիոն անհետաձգելի համարվող ծրագրերով իրականացված շինարարական աշխատանքների մասին:

/*Զեկ. Սասուն Սահակյան* - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

5. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված և առաջիկայում իրականացվելիք աշխատանքների մասին:

/*Զեկ. Լուսինե Վարդանյան* - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ/

6. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2024 թվականի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության, աղբահանության բնագավառում կատարված աշխատանքների և համայնքային ծառայողների մրցույթների արդյունքների մասին:

/*Զեկ. Վանիկ Հարությունյան* - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ/

7. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2024 թվականի ընթացքում հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման և քաղաքաշինական նախագծային փաստաթղթերը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնելու մասին:

/*Զեկ. Մարատ Ղուրշուդյան* - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ/

8. ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական և համայնքային նշանակության ավտոճանապարհների 2024 թվականի ընթացքում իրականացված ընթացիկ ամառային և ձմեռային պահպանության աշխատանքների մասին:

/*Զեկ. Գևորգ Խաչատրյան* - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ/

9. ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստի ամփոփում:

/ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան/

10. Այլ հարցեր:

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվեց՝

1) ապահովել համայնքների 2024 թվականի սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ /այսուհետ՝ Սեփական եկամուտներ/ ամբողջական հավաքագրումը և համայնքների 2025 թվականի բյուջեների Սեփական եկամուտների հավաքագրումը՝ համամասնություններով պահանջվող ցուցանիշներով.

2) խիստ հսկողություն սահմանել ընդերքօգտագործման նկատմամբ և ապօրինի դեպքեր հայտնաբերելիս ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) մշտական վերահսկողություն իրականացնել համայնքների բնակավայրերում տարբեր ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ՝ դրանք ըստ նախագծերի և անթերի կատարելու համար.

4) կասեցնել կամ կանխարգելել համայնքների վարչական տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի պահանջների խախտումներով իրականացվող ապօրինի շինարարությունները.

5) համայնքներում խմելու ջրագծեր անցկացնելու ծրագրերի նախագծերը՝ հակահրդեհային հիդրատների մասով, պարտադիր համաձայնեցնել ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հետ.

6) հետևողական աշխատանքներ տանել համայնքներում շահագործվող աղբավայրերի և դրանց հարակից տարածքների սանիտարական և բնապահպանական նորմերի պահպանման ուղղությամբ.

7) առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության վերաբերյալ հողաշինարարական գործեր կազմելիս առաջնորդվել Կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ սահմանված դրույթներով.

8) քաղաքաշինական նախագծային փաստաթղթեր կազմելիս առաջնորդվել Կառավարության 29.12.2005թ. N 2404-Ն և 18.12.2008թ. N 1563-Ն որոշումներով սահմանված դրույթներով.

9) ուշադրության կենտրոնում պահել համայնքային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքների իրականացման գործընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

X

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ